

ՄԵՍ ՅՈՒՆԵՍԿՈՒՆԸ ԲԵՐԱՅԻ ՄԷՋ

Իսահան Սանուց Միութիւնը, ինչպէս զրեցինք, պատրաստութիւններ տեսած է Հայկական Մեծ Յորեկեանը վայելուչ հանդիսաւորութեամբ տօնելու համար Բերայի մէջ: Այդ առթիւ օրուան մեծ տօնին համար պատրաստուած քառաձայն խումբերգներ պիտի երգուին կոմիտաս վարդապետի երկսեռ երգչախումբին կողմէ: Կոմիտաս վարդապետ պիտի երգէ նաև մեներգներ: Դաշնակի վրայ պիտի նուագէ Պ. Յարութիւն Սինանեան: Մեսրոպի ձօնուած իր մէկ քերթուածը պիտի արտասանէ Ատոմ Նարճանեան (Սիամանթօ): Օրուան տօնին առթիւ բանախօսութիւններ պիտի արտասանեն Պ. Պ. Գ. Խաժակ, Դանիէլ Վարուժան, և ուրիշներ: Մանրամասնութիւններ պիտի տրուին շուտով: